




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

8652

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ
ՌԳԵՏՈՒԹՅՈՒՆ ԺՈՂՈՎԳԵԿՈՆ ԿՈՄԻՍՏՐԻՏՍԻ

Պրոլետարներ բոլոր յերկրներե, միացե՛ք

ԳԻՐԲ № 21

ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՀՈՎԻՎՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

(Հարց ու պատասխանի ձևով)

3317
բ-33

ՀՐԱՏՐԵԿՈՒԹՅՈՒՆ ՀՍԽՀ
ԱՐԳԵՐԵԳՆԱԿԱՆ ԺԱՂԱՎՐԿԱՆ ԿՈՄԻՍՏՐԵՏԻ

Պրոկտարներ բոլոր յերկրների, միացեալ

331.7

F-33

Ա.Կ.

2001

ԳԻՐԲ № 21

ԲԱՏՐԱԿՆԵՐԻ ՅԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ՀՈՎԻՎՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ

(Հարց ու պատասխանի ձևով)

2010

19638
act

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ № 1463
ԳՐԱԶԵՊՎԱՐ № 1662 Ը.
ՏԻՐԱԺ 2000



3539-53

ԻՆՁ ՊԵՏՔ Ե ԻՄԱՆԱ ԲԱՏՐԱԿԸ ԻՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՅԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՐՑ. Ո՞վ է պաշտպանում բատրակների շահերը.

ՊԱՏԱՍ. Բատրակների շահերը պաշտպանում է խորհրդային իշխանութիւնը, յեղինակ բանվոր դասակարգի ընդհանուր խնդիրներից, այն է՝ բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիութեան զաւինքի ամրացումից, և գյուղատնտեսութեան արտադրող ուժերի զարգացման շահերից.

Հ. Ինչ ձևով է խորհրդային իշխանութիւնը պաշտպանում բատրակների շահերը.

Պ. Խորհրդային իշխանութիւնը բատրակներին շահերը պաշտպանում է հատուկ որոնքներ հրատարակելով. այդ որոնքներով կարգավորում է այն բատրակների աշխատանքը, վորոնք վարձով աշխատում են գյուղացիական տնտեսութիւններում, վորտեղ վարձու աշխատանքը ոժտնդակ բնույթ է կրում, ինչպէս նաեւ գյուղական համայնքների, նրանց առանձին մասերի, անասնատերերի ստանձին խմբերի մօտ:

2. Բատրակների շահերի պաշտպանութիւնը գործում ի՞նչ դեր է խաղում գլուղանտառմիւրքյունը:

9. Գյուղատնտառմիութիւնները բատրակներին շահերի պաշտպանութեան գործում բոլոր հնարավոր միջոցներով աշխատում է բարելաւել բատրակներին ու բատրակուհիներին աշխատանքի ու կյանքի պայմանները, ինչպէս նաեւ պաշտպանել նրանց իրավական շահերը:

2. Խորհրդային իշխանութիւնը ի՞նչ որեւեմներ է հրատարակել բատրակների շահերը պաշտպանելու համար:

9. 1) ԽՍՀՄ Ժողկոմխորհը 1925 թ. ապրիլի 18-ին հրատարակել է «Ժամանակավոր կանոններ գյուղացիական տնտեսութիւններում ոժանդակ վարձու աշխատանք կիրարկելու պայմանների մասին» (ԽՍՀՄ Որ. Ժող. 1925 թ. № 8, հոդ. 475):

2) ԱՍՖՖՀ Ժողկոմխորհը 1925 թ. հրատարակել է այդ կանոնները կիրարկելու հրահանգ (ԱՍՖՖՀ Որ. Ժող. 1925 թ., № 8, հոդ. 475), իսկ 1928 թ. մարտի 31-ին հատուկ վորոշումով մի շարք ելական փոփոխութիւններ ու լրացումներ է մտցրել այդ Հրահանգի մեջ (ԱՍՖՖՀ Որ. Ժող. 1928 թ., № 9, հոդ. 100):

3) Բացի դրանից ԱՍՖՖՀ Աշխօղկոմատը 1927 թ. մարտի 25-ին հրատարա-

կել է հատարակական հովիւների (շորանների և նրանց ոգնականների (ПОДПАСОВ) աշխատանքի պայմանների և վարձման կարգի կանոններ:

Ա. ԺՍՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒՄՆԴԱԿ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆԲ ԿԻՐԱՐԿԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՅԵՎ ՆՐԱ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՇՐԱՆԱԳ.

2. Ի՞նչ է «Ժամանակավոր կանոնների» ելութիւնը:

9. Միութ. կառավարութիւնը «Ժամանակավոր կանոններ» հրատարակել է՝ մեր աշխատանքային որենադրութիւնը գյուղատնտեսութեան առանձնահատկութիւններին հարմարեցնելու համար: Պարզէնք որինակով: Ինչպէս հայտնի յէ, մեր որենադրութեամբ սահմանված է Տ-ժամյա բանվորական որ, վորպէս հիմնական կանոն: Գյուղացիական տնտեսութեան մեջ, մանավանդ ամառը, Տ-ժամյա բանվորական որը կիրառելի չէ: Ժամանակավոր կանոններով թույլ է տրվում յերկարացնել բանվորական որը վորոշ սեզոններում, սակայն կողմերի համաձայնութեամբ յերկարացված բանվորական որվա համար սահմանվում է լրացուցիչ վորձատրութիւն:

I. Ժամանակավոր կանոնների. ներգործության
սահմանները.

Հ. Ինչպիսի տնտեսությունների վրա յե տա-
րածվում Ժամանակավոր կանոնների և
նրանց կիրարկման հրահանգի ներգործու-
թյունը.

Պ. Ժամանակավոր կանոնների ներգործու-
թյունը տարածվում է թե աշխատավո-
րական ոգտագործության շնչապատկան
հոգերի և թե վարձակալական հոգերի վրա
գտնվող աշխատավորական բոլոր դյուղա-
ցիական տնտեսությունների վրա. այդ
բոլոր տնտեսություններում բատրակների
և բատրակուհիների վարձու աշխատանքը,
անկախ վարձման Ժամանակամիջոցից
(վորոչ Ժամանակով, մշտական, Ժամա-
նակավոր սեզոնային), համարվում է ո-
ժանդակ՝ ընտանիքի բանվորական ուժի
նկատմամբ: Այս նշանակում է, վոր տվյալ
տնտեսության մեջ ապրող՝ ընտանիքի բո-
լոր աշխատունակ անդամները բատրակ
վարձելու դեպքում իրենք ևս պարտավոր
են անձամբ աշխատելու իրենց տնտեսու-
թյան մեջ. միայն այս դեպքում բատրակի
աշխատանքը ոժանդակ բնույթ կկրի: Ո-
րենքը այսպիսի պահանջ դնելով, նպա-
տակ ունի բատրակի աշխատանքը պաշտ-
պանել շահագործությունից: Որենքը բա-
ցառություն է անում միայն այն աշխա-

տավորական տնտեսությունների նկատ-
մամբ, վորտեղ բացառիկ պայմանների
շնորհիվ ընտանիքը տվյալ վայրում չու-
նի աշխատունակ անդամներ—որինակ՝ ըն-
տանիքում բոլորը հաշմանդամներ են,
վորքեր են կամ աշխատունակները զին-
վորական ծառայության են կանչված և
այլն: Այսպիսի տնտեսությունների վրա
ևս Ժամանակավոր կանոնների ներգոր-
ծությունը տարածվում է:

Հ. Վո՞ր տնտեսությունների վրա Ժամանա-
կավոր կանոնների ուժը չի տարածվում.

Պ. Ժամանակավոր կանոնների ուժը չի տա-
րածվում արդյունաբերական տիպի տըն-
տեսությունների վրա, այսինքն՝ այն տըն-
տեսությունների վրա, վորտեղ իրենց ար-
տադրանքի զգալի մասը վաճառում են
չուկայի համար: Արդյունաբերական տըն-
տեսության տիպը վորոշելու համար պետք
է նկատի ունենալ տնտեսության այն յե-
կամուտը, վորը հաշվառման է յենթարկ-
վում միասնական գյուղատնտեսական
հարկ սահմանելիս, վարձու աշխատանք
կիրարկելու աստիճանը, ծխի անդամների
ունեցած արդյունաբերական ու առևտրա-
կան ձեռնարկությունները, և այլն. հա-
մենայն դեպս, վորպես ընդհանուր կանոն,
արդյունաբերական տնտեսությունների
թվին են պատկանում այն գյուղացիական

անտեսությունները, վորակ ճիշտամաս-
նակ կիրարկվում է առնվազն 3 բառարակի
կամ բառարակուհու աշխատանք ամբողջ
գյուղատնտեսական սեզոնի ընթացքում
(դաշտային աշխատանքների սկզբից մին-
չև վերջը տվյալ ուսյունում), կամ յեթե
ծխի անգամները վերցնում են արդյունա-
բերական ձեռնարկության արտոնագիր
(պատենա—յերկրորդ կարգից վոչ ցած),
կամ լուստրական ձեռնարկության և միջ-
նորդական զբաղմունքի արտոնագիր (ան-
կախ կարգից): Արդյունաբերական տիպի
այն տնտեսությունների կատեգորիաները,
վորոնց վրա՝ տեղական, տնտեսական և
կենցաղային պայմանների հեռանկարով չի
տարածվում ժամանակավոր կանոնների
ներգործությունը, վորոշում է ժողկոմ-
խորհրդ: (Տես հավելվածը):

2. Վարձելու ինչպի՞սի պայմաններ են սահ-
մանված արդյունաբերական տիպի տրե-
տեսություններում.
9. Արդյունաբերական տիպի տնտեսություն-
ների վրա տարածվում է աշխատանքի վե-
րաբերյալ ընդհանուր սրենագրությունը,
այսինքն՝ Աշխատանքի Որենագիրքը և աշ-
խատանքի պայմանների վերաբերյալ այն
կանոնները, վորոնք կիրարկվում են խոր-
հրդային տնտեսությունների նկատմամբ:

II. բառակներ յեվ բառակունիներ վարձելու
կարգը.

2. Բառակներ և բառակունիներ վարձելու
ի՞նչ կարգ է սահմանված.
9. Բառակներն ու բառակուհիները գործի
յեն ընդունվում անմիջականորեն վարձո-
ղի կողմից. արդեւվում է բառակներ
վարձել բառակեղծների, գյուղխոր-
հուրդների և այլ մարմինների միջոցով:
Նմանապես վարձողները իրավունք չունեն
բառակներ վարձելու համար գիմելու
վերոհիշյալ մարմիններին՝ թույլատվու-
թյուն ստանալու նպատակով:

III. վարձելու պայմաններ.

2. Բառակներ վարձելու ինչպի՞սի պայման-
ներ են սահմանված.
9. Բառակներ վարձելու պայմանները վո-
րոշվում են հոժարակամ գրավոր համա-
ձայնությամբ—աշխատանքի պայմանա-
գրով, վորը կնքվում է վարձողի և վար-
ձվողի (բառակի) միջև: Գրավոր համա-
ձայնություն կնքելը պարտադիր է:
2. Ի՞նչ է աշխատանքի պայմանագիրը.
9. Աշխատանքի պայմանագիրը յերկու կամ
ավելի թվով անձանց համաձայնությունն
և, վորի հիման վրա մի կողմը (վարձ-

վողը) իր բանվորական ուժը վարձատրութեամբ տրամադրում է մյուս կողմին (վարձողին) :

Աշխատանքի պայմանագիրը կնքվում է թե կոլլեկտիվ պայմանագիր յեղած և թե չեղած դեպքում, (Աշխ. Որ. 27 հոդ) :

Հ. Կարող է, արդյո՞ք, արհմիությունը աշխատանքի պայմանագիր կնքել .

Պ. Գյուղատնտեսական և անտառային բանվորների արհմիությունը, սրենքի համաձայն, կարող է բատրակի անունից պայմանագիր կնքել, վորը ստորագրում է արհմիության ներկայացուցիչը : Ընդհանրապես բատրակները պետք է աշխատեն իրենց պայմանագրերը կնքել արհմիության միջոցով, վորովհետև այս դեպքում նրանց չափերը ավելի ապահովված կլինեն :

Հ. Վարձողը պարտավոր է, արդյո՞ք, գրավոր համաձայնություն կնքելու առանձին որական աշխատանքի համար բատրակ վարձելիս .

Պ. Բատրակ կամ բատրակուհի վարձելիս, յեթե նրանք վարձվում են միայն վոչ ամսի ընթացքում ընդհանուր ամսամբ մեկ ամսից վոչ ավելի ժամանակով առանձին աշխատանքներ կատարելու համար, —

դրավոր համաձայնություն կնքելը պարտագիր չէ :

Հ. Ինչպի՞սի պայմաններ պետք է մատուցված լինեն համաձայնության (աշխատանքի պայմանագրի) մեջ .

Պ. Համաձայնութեան մեջ պետք է մատնանշված լինի—ա) այն հիմնական աշխատանքը, վորի համար վարձվում է բատրակը, բ) վարձելու ժամանակամիջոցը, գ) աշխատանքի (բանվորական) ժամանակը, դ) աշխատանքի չափը, տեսակները և վճարման ժամանակները, և) կողմերի սահմանած լրացուցիչ պայմանները :

Հ. Կարող են, արդյո՞ք, վարձման պայմանները վատքարացնել բատրակի (բատրակուհու) դրությունը՝ ժամանակավոր կանոնների համեմատ :

Պ. Վարձելու պայմանների վերաբերյալ համաձայնությունը չի կարող բատրակի կամ բատրակուհու դրությունը վատթարացնել՝ ժամանակավոր կանոնների համեմատութեամբ . պայմանների վատթարացումն անվավեր է :

Հ. Վո՞րքան ժամանակով կարելի յե կրնա բատրակ վարձելու վերաբերյալ համաձայնությունը (աշխատանքի պայմանագիրը) .

- Պ. Վարձման պայմանագիրը կարելի չէ կրնալ մեկ տարուց վոչ ավելի ժամանակով:
- Հ. Կարելի չե՞ պայմանագիրը կնքել աշխատանքներն սկսելուց մի տարի առաջ:
- Պ. Որենքը թույլ չի տալիս վարձման վերաբերյալ աշխատի համաձայնություն կրնալ, վորի կատարումը պետք է սկսվի համաձայնությունը կնքելուց մեկ տարի կամ ավելի յերկար ժամանակից հետո:

IV. Գրավոր համաձայնությունների ստորագրումն ու տոմարագրությունը.

- Հ. Ո՞վ է ստորագրում վարձման վերաբերյալ Համաձայնությունը (աշխատանքի պայմանագիրը)?
- Պ. Գրավոր համաձայնությունը (աշխատանքի պայմանագիրը) կազմվում է 3 որինակ, և ստորագրում են վարձույն ու վարձվողը (բատրակ, բատրակուհի): Պայմանագիրը կազմելու բոլոր ծախքերը բնկնում են վարձողի վրա, իսկ վարձվողը այդ գեպքում վոչ մի ծախք չի կատարում:
- Յերբ գրավոր համաձայնությունը վարձվողի անունից ստորագրում է արհմիությունը, այդ գեպքում պայմանագիրը կազմվում է 4 որինակ, և կազմելու պարտականությունը գրվում է արհմիության վրա:

Հ. Վո՞րտեղ պետք է տոմարագրվի պայմանագիրը.

Պ. Աշխատանքի պայմանագիրը (գրավոր համաձայնությունը) պետք է տոմարագրվի վարձման վայրի գյուղատրհուրում, իսկ վորտեղ գյուղատրհուրդներ չկան, — մերձակա գյուղատրհուրում կամ գավառակային գործկոմում: Պայմանագիրը տոմարագրելու համար վոչ մի վարձատրություն չի վերցվում վարձողից կամ վարձվողից, և խորհուրդներն ու գավառակային գործկոմներն իրավունք չունեն վորեւէ փոխառություն մտցնելու նրանց ներկայացվող պայմանագրերի մեջ: Գյուղատրհուրը պարտավոր է պայմանագիրը տոմարագրելու նաև այն գեպքերում, յերբ ներկայացնում են արհմիութենական կազմակերպություններ:

Հ. Ո՞վ է պարտավոր պայմանագիրը տոմարագրել տալու.

Պ. Վարձողը պարտավոր է պայմանագիրը ներկայացնելու գյուղատրհուր գտնարանգրելու համար՝ վարձելու (պայմանագիրն ստորագրելու) պահից վոչ ուշ քան յերկու շաբաթվա ընթացքում:

Հ. Վո՞րքան ժամանակում գյուղխորհուրդը պետք է տոմարագրի աշխատանքի պայմանագիրը.

- Պ. Գյուղխորհուրդը պարտավոր է աշխատանքի պայմանագիրը (համաձայնությունը) տոմարագրելու հենց նույն օրը, յերբ վարձույր կամ ստորին արժիւթե-նական կազմակերպությունը ներկայաց-նում է տոմարագրելու համար. համենայն դեպս պայմանագիրը պետք է տոմարա-գրվի վոչ ուշ, քան մյուս օրը:

Տոմարագրությունը կատարվում է՝ պայմանագրի պայմանների հիմնական կետերը (որ. վարձելու ժամանակամիջոցը, աշխատանքի օրը, աշխատավարձի չափը, վճարելու ժամանակը և այլն) պայմանա-գրերի մատյանի մեջ մուծելով:

- Հ. Պայմանագիրը տամարագրելուց հետո ի՞նչ է տրվում վարձուղի և վարձվողի ձեռքը.

- Պ. Պայմանագիրը գյուղխորհրդում տոմարա-գրելուց հետո պայմանագրի ներկայաց-ված 3 օրինակից մեկական վավերացրած օրինակ արվում է վարձուղին և վարձվո-ղի (բաւրակ, բաւրակուհի) ձեռքը, իսկ յերրորդ օրինակը մնում է գյուղխորհրդի գրասենյակում:

Այն դպրեւում, յերբ վարձվողի ա-նունից պայմանագիրը կնքում են արհ-միւթենական կազմակերպությունները, ինչպես ասվեց վերևում, — պայմանագիրը կազմվում է 4 օրինակ, և 4-րդ վավերաց-

ված օրինակը արվում է արժիւթենական կազմակերպությանը:

- Հ. Ո՞վ է պարտավոր տամարագրելիս պայմա-նագիրը կարդալու անգրագետին.

- Պ. Անգրագետ կոմի կամ յերկուսն ել՝ ան-գրագետ լինելու դեպքում նրանցից մեկի պահանջով գյուղխորհրդի ներկայացու-ցիչը պայմանագիրը տոմարագրելուց հե-տո պետք է բարձրաձայն կարգա:

- Հ. Պետք է. արդյո՞ք, աշխատանքի պայմա-նագրի մեջ վավերացնել անգրագետի փո-խարեն կատարված ստորագրությունները կամ՝ անգրագետ բաւրակի կամ վարձո-ղի պայմանական նշանները.

- Պ. Այո՛ պետք է: Այդ վավերացումը կատա-րում է գյուղխորհուրդը, վորը իրավունք չունի դրա համար փոքեւ վարձ ստանա-լու:

- Հ. Բաւրակ վարձելու վերաբերյալ գրավոր համաձայնությունը վո՞ր պահից է ուժի մեջ մտնում.

- Պ. Այդպիսի համաձայնությունները ուժի մեջ են մանում վոչ թե գյուղխորհրդում վա-վերացնելու, այլ կոմիտեի ստորագրելու պահից:

- Հ. Ի՞նչ նշանակություն ունի աշխատանքի պայմանագրերի տամարագրությունը.

- Պ. Աշխատանքի պայմանագրերի տամարագրությունը հնարավորություն է տալիս արհմիութենական կազմակերպություններին և աշխատանքի տեսչությանը հսկողություն ունենալու և հետևելու, վորպեսզի պահպանվեն ժամանակավոր կանոնները այն դեպքերում, յերբ աշխատանքի պայմանագրերը կնքվում և առանց արհմիության մասնակցության, և վորպեսզի աշխատանքի պայմանագրերի հայտնում կատարվի:

VI. Աշխատանքի (բանվորական) ժամանակը
յեվ հանգստի օրերը.

- Հ. Կարելի չէ, արդյո՞ք, բատրակի համար յերկարացված, այսինքն՝ 8-ժամից ավելի տևող աշխատանքի որ սահմանել.
- Պ. Որենքը թույլ է տալիս սահմանել նաև 8 ժամից յերկար, սակայն 10 ժամից վուշ ավելի աշխատանքի որ գյուղատնտեսական առանձին սեզոններում, նայած աշխատանքի լարվածությանն ու բնույթին. աշխատանքի օրվա տևողությունը պետք է վորոշված լինի աշխատանքի պայմանագրի մեջ յերկու կողմի համաձայնությամբ: Որենքը պահանջում է նաև, վորպեսզի գրավոր համաձայնության մեջ վորոշված լինի, թե յուրաքանչյուր առանձին սեզոնում տարվա տարբեր ժա-

մանակներում աշխատանքի օրը վո՞րքան տևողություն պետք է ունենա:

- Հ. Որեմեով թույլ է տրվում արդյո՞ք, գիշերային աշխատանքը.

- Պ. Կողմերի համաձայնությամբ բացառիկ դեպքերում կարող է գիշերային աշխատանք կատարվել գյուղատնտեսական աշխատանքների յեռուն չըջանում, ինչպես օրինակ՝ խոտհնձի, արտերը ջրելու ժամանակ, և այլն:

- Հ. Հանգստի ի՞նչ օրեր են տրվում բատրակին.

- Պ. Վարձողը պարտավոր է բատրակին կամ բատրակուհուն շաբաթվա մեջ մեկ որ տալ հանգստի համար (տոն օր):

Բացի զրանից բատրակները և բատրակուհիները պետք է ազատվեն նաև հեղափոխական տոներին: Որենքով սահմանված են հետևյալ հեղափոխակ. տոները. — ա) հունվարի 1-ը — նոր տարի, բ) հունվարի 22 — հունվարի 9-ի օրը, գ) մարտի 12-ը — ինքնակալության տապալման օրը, դ) մարտի 18-ը — Փարիզի Կոմունայի օրը, ե) մայիսի 1-ը — ինտերնացիոնալի օրը, զ) սեպտեմբերի 20-ը — Բազմի 26 կոմունարների զնդակահարության օրը, ը) նոյեմբերի 7 և 8-ը — պրոլետարական հեղափոխության օրերը:

Բատրակներն ու բատրակուհիները աշխատանքից ազատվում են նաև Հայաստանի խորհրդայնացման որը, այսինքն՝ նոյեմբերի 29-ին: Բացի այդ տոներից բատրակներն ու բատրակուհիները աշխատանքից ազատվում են տարվա մեջ 5 հատուկ հանգստի օրեր (տեղական ժողովրդական տոներ): այս օրերը սահմանում է Աշխատանքի ժողովրդական կոմիտեի քաղաքացիական օրենսդրության մամուլի պաշտոնական օրենսդրություն: Թե բոլոր տոն և հանգստի օրերին և թե աշխատելու օրերի ազատ ժամերին բատրակը կամ բատրակուհին իրավունք ունեն տնից հեռանալու և իրենց ազատ ժամանակը ողջ գործելու իրենց հայեցողությամբ:

2. Կարող ե, արդյո՞ք, վարձողը վորևե գումար հանել բատրակի աշխատավարձից տոն օրերի համար:

Պ. Վո՛չ, իրավունք չունի: Մշտական սեղոնային բանվորներին տոն օրերի համար աշխատավարձ և կերակուր է տրվում այնպես, ինչպես աշխատանքի օրերին:

2. Ի՞նչ դեպքերում կարելի չէ տոն օրերին (հանգստի օրերին) աշխատանք կատարել:

Պ. Վորևե հանգստի օր (չարաթվա հանգստի օր կամ վերը թված հատուկ հանգստի օր) թույլ է տրվում աշխատել միայն յետևյալ աշխատանքների ժամանակ (հունձ, խոտ-

հարք և այլն): Այդ օրվա փոխարեն բատրակին կամ ուրիշ հանգստի օր է տրվում, կամ դրամական վարձատրություն է տրվում վարձվողի և վարձողի համաձայնությամբ: Վերահիշյալ հեղափոխական տոներին վոչ մի աշխատանք չի կարելի կատարել, և այդ տոները ուրիշ օրերով փոխարինել թույլ չի տրվում:

VI. Անխաճանի այլ պայմաններ.

2. Պետք է, արդյո՞ք, աշխատանքի պայմանագրի մեջ մատնանշել, թե բատրակը ինչ աշխատանքի համար է վարձվում:

Պ. Այո՛, աշխատանքի պայմանագրի մեջ պետք է մատնանշվեն այն հիմնական աշխատանքները, վորոնց համար բատրակը վարձվում է:

2. Տիրոջ հաշվին կերակրվելու դեպքում բատրակը ինչպի՞սի կերակուր ստանալու իրավունք ունի:

Պ. Այդպիսի համաձայնությամբ դեպքում վարձողը պարտավոր է բատրակին տալու այն կերակրից, վորը դորձ է անվում վարձողի ընտանիքում:

2. Ինչպի՞սի բնակարան պետք է տրվի բատրակին, յեթե նա ապրում է վարձողի մոտ:

Պ. Վարձողը պարտավոր է բատրակին տրա-

մաղբերու բնակութեան համար պիտանի չենք:

Հ. Որեմքի համաձայն բատրակը ի՞նչ պարտականութիւններ ունի.

Պ. Բատրակը պարտաւոր է կատարելու այն աշխատանքները, վորոնք հիշված և վորոշված են պայմանագրով—նա պետք է խնամքով վերաբերվի անասուններին ու ինվենտարին, պետք է վորեւէ վնաս չհասցնի վարձողի գույքին: Բատրակը հետանանալիս պարտավոր է վերադարձնելու վարձողին այն, ինչ վոր հանձնված է յեղել նրան:

VII. Աւստարարի մասին.

Հ. Կարող է, արդյո՞ք, աշխատավարձը սվլյալ վայրում սահմանված պետական նվազագույն չափից (մինիմումից) պակաս լինել:

Պ. Բատրակի աշխատավարձի (աշխատանքի վարձատրութեան) չափը սահմանվում է կողմերի համաձայնութեամբ. համենայն դեպս այդ չափը չի կարող պետական այն նվազագույն աշխատավարձից պակաս լինել, վոր Աշխատանքի Ժողովրդական կոմիտարիատը սահմանում է սվլյալ վայրում: Կողմերի զբաւոր համաձայնութեամբ սահմանվում են նաեւ վարձատրու-

թեան տեսակները (փող, որավարձ կամ խառը) և վճարման յեղանակը (որական, ամսական վարձ, դորժավարձ և այլն):

Հ. Ի՞նչ է աշխատավարձի պետական նվազագույն չափը (մինիմումը):

Պ. Պետութիւնը աշխատավորների շահերի պաշտպանութեան համար սահմանում է աշխատավարձի վորոշ չափ, վորը պարտաւոր է բոլոր վարձողների համար, և վորից պակաս վոչ մի վարձ իրավունք չունի վճարելու: Յեթե վորոշված աշխատավարձը պետական նվազագույն չափից պակաս է, այդ դեպքում վոչ մի համաձայնութիւն (աշխ. պայմանագիր) վաւերական և որինական չէ: Աշխատավարձի այդ նվազագույն չափը ամեն ամիս հայտարարվում է Աշխտողկոմատի կողմից և կազմվում է աշխատավարձի պետական մինիմում:

Հ. Թույլ է տրվում, արդյո՞ք, ամբողջ վարձատրութիւնը կամ նրա մի մասը տալ բնավարձով.

Պ. Այո՛, թույլ է տրվում—միայն հարկավոր և գրավոր համաձայնութեան մեջ մատնանըչել, թե վարձողը ի՛նչ առարկաներ, ի՛նչ վորակի և վո՛րքան պետք է տա:

Հ. Կարող է, արդյո՞ք, վարձողը բատրակին ստիպել բնավարձ ստանալու այն դեպքե-

րում, յերբ համաձայնությամբ փող ե վո-
րոշված:

Պ. Վճ'չ. որենքը այդ արդեւում ե, և յեթե
վարձողը խախտի որենքի այդ պահանջը,
ապա դատական պատասխանատւության
կենթարկվի:

Հ. Վարձողը իրավունք ունի աշխատավար-
ձից վորեւ գումար հանելու:

Պ. Վարձողը իրավունք չունի ինքնագլուխ
վորեւ բան պահելու բատրակի աշխատա-
վարձից: Յեթե բատրակը իր անխույժ վե-
րաբերմունքով վորեւ վնաս ե պատճառում
գործիքներին, գյուղատնտեսական մեքե-
նաներին, ինվենտարին և այլն, այդ դեպ-
քում վարձողը կարող ե գյուղխորհրդին
կից հաշտարար հանձնաժողովի կամ ժողո-
վրդական դատարանի միջոցով պահանջ
ներկայացնել բատրակի դեմ՝ վնասը հա-
տուցելու համար:

VIII. Անչափահսների յեվ հղի կանանց առ-
խասանք գյուղացիական օնսեսություններու մ.

Հ. Անչափահսները (պատանիները) բանի՞
տարեկան կարող են վարձու աշխատանք
կատարել.

Պ. Գյուղացիական տնտեսություններում վար-
ձու աշխատանք կարող են կատարել այն
անչափահսները, վորոնց 14 տարին լրա-

ցել ե: Առանձնապէս թեթեւ աշխատանքներ
կատարելու համար թույլ ե տրվում վար-
ձել նաեւ 12 տարեկանից վոչ փոքր պատա-
նիներին:

Հ. Ինչպի՞սի գործերում ե արգելվում պատա-
նիների և հղի կանանց աշխատանքը.

Պ. Պատանիների և հղի կանանց աշխատանքն
արգելվում ե առողջության համար վնաս
ստեղծար և ուժերից վեր գործերում: Արգել-
վում ե 14 տարեկանից փոքր պատանիներ-
ին և ստնտու (ծիժ տվող) կանանց աշխա-
տեցնել գյուղատնտեսական գիշերային
աշխատանքներում:

Բացի սրանից 14 տարեկանից փոքր
պատանիներին չի կարելի աշխատեցնել
գյուղատնտեսական բարդ մեքենաների
վրա (հնձող մեքենա, խրճակապ մեքենա,
կալսող մեքենային խուրճ տալու աշխա-
տանք և այլն):

Հ. Որե՞նքով ի՞նչ պարտականություններ են
դրվում վարձուի վրա փոքրահասակների
նկատմամբ.

Պ. Վարձողը սրբոտավոր ե փոքրահասակ
բատրակին սովորեցնել տնտեսներին պա-
հելն ու խնամելը, գյուղատնտեսական մե-
քենաների հետ վարվելու ձեւը, տնտեսու-
թյուն վարելը և այլն:

IX. Բաժնակիցները յիմ նրա հետանալը.

Հ. Վարձողը պարտավոր է, արդյո՞ք, բառակին արձակելիս նրան նախագգուշացնելու, և քանի՞ որ առաջ.

Պ. Վարձողը կարող է հարգելի պատճանհարով բառակին պայմանագրով վերջաված ժամանակից արձակել, սակայն պետք է 2 շաբաթ առաջ նրան նախազգուշացնի:

Հ. Վեր դեպքերում բառակն ունի արձակման նպատակ ստանալու և ի՞նչ չափով:

Պ. Յերբ վարձողը բառակին արձակում է առանց նախազգուշացնելու, ապա պարտավոր է նրան 2 շաբաթվա աշխատավարձ վճարելու (արձակման նպատակ), յեթե բառակը նրա մոտ աշխատել է մեկ ամսից վոչ պակաս:

Բացի դրանից բառակին արձակման նպատակ տրվում նաև այն դեպքում, յերբ նա ինքն է հեռանում վարձողի կամ նրա ընտանիքի անդամների կողմից վերաբերմունքի պատճառով կամ վարձողի կամ նրա ընտանիքի անդամների վարակիչ հիվանդություն ունենալու դեպքում:

Արձակման նպատակի չափը վերջինիս նկատի յե առնվում բառակի թե դրամով և թե բնագործերով ստացած ամբողջ աշխատավարձը:

Բացի վերահիշյալից, բառակի արձակվելու կամ հեռանալու դեպքում, յեթե նա մի ամսից պակաս չի աշխատել, նրան իրավունք է տրվում 2 շաբաթ ապրելու վարձողի տված բնակարանում:

Հ. Վեր դեպքում բառակին արձակման նպատակ տրվում:

Պ. Արձակման նպատակ տրվում այն դեպքերում, յերբ բառակը հեռանում է իր կամքով:

Հ. Կարելի յե արդյո՞ք, բառակին արձակել արհմիության անդամ լինելու կամ հասարակական աշխատանքի մասնակցելու համար:

Պ. Արհմիության անդամ լինելը կամ հասարակական աշխատանքի մասնակցելը չի կարող բառակին արձակելու պատճառառ. բառակը հասարակական աշխատանքը կատարում է իր աշխատանքի այն ժամանակից դուրս, վոքը սահմանված է համաձայնությամբ (աշխատանքի պայմանագրով), բացի այն դեպքերից, յերբ նա մասնակցում է խորհուրդների ընտրությունը կամ ընդհանուր ժողովների, ինչպես նաև խորհուրդների և արհմիությունների համագումարներին:

Հ. Բառակը հեռանալիս քանի՞ որ առաջ պետք է նախագգուշացնի վարձողին:

Պ. Բատրակը հեռանալու դեպքում պարտա-
վոր է մեկ շաբաթ առաջ նախադուշացնե-
լու վարձողին:

Հ. Կարող է, արդյո՞ք, վարձողը բատրակի
հեռանալու դեպքում պահել նրա փաստա-
թղթերը:

Պ. Վո՛չ, վարձողը չի կարող բատրակի հեռա-
նալու դեպքում պահել նրա փաստաթղթե-
րը (անձնագիրը և այլն), ինչպես նաև նրան
պատկանող իրերը (հագուստ, վոտնաման,
անկողին և այլն):

X. Բաճրակների յեվ բաճրակունիների ապա-
նովումը ի դեպ հիվանդության, ծննդաբե-
րության յեվ խեղանդամության.

Հ. Վարձողը ի՞նչ ոգնություն պետք է ցույց
տա բատրակին, առաջին հերթին նրա ծա-
նրը հիվանդության և բնդհանրապես հի-
վանդանալու դեպքում.

Պ. Բատրակի ծանր հիվանդության, բատրա-
կուհու ծննդաբերության դեպքերում կամ
դժբախտ դեպք պատահելիս վարձողը
պարտավոր է կամ հիվանդին բժշկի մոտ
կամ հիվանդանոց և կամ բժշկման կայան
տանելու, կամ բժշկին կամ բուժակին հի-
վանդի մոտ հրավիրելու:

Բացի դրանից, ամբողջ գյուղատնտե-
սական սեզոնի ընթացքում բատրակի աշ-

խատանքը կիրարկող գյուղացիական տըն-
տեսությունը բատրակի հիվանդության
կամ բատրակուհու ծննդաբերության դեպ-
քում, յեթե բատրակը կամ բատրակուհին
ավյալ տնտեսության մեջ մեկ ամսից պա-
կաս չեն աշխատել, պարտավոր է վճարե-
լու նրանց՝ համաձայնությամբ վորոշած
աշխատավարձը, տալու նրանց կերակուր
և բնակարան մի ամսվա ընթացքում՝ հաշ-
ված հիվանդության կամ ծննդաբերու-
թյան պատճառով աշխատանքը դադարեց-
նելու օրից: Յեթե տնտեսությունը բա-
րակի աշխատանքից ոգավում է միայն
գյուղատնտեսական աշխատանքների ա-
ռանձին սեզոններում, ապա պարտավոր է
աշխատավարձ, սնունդ և բնակարան տա-
լու 2 շաբաթ ժամանակով. այս դեպքում
անհրաժեշտ է, վորպեսզի բատրակը կամ
բատրակուհին ավյալ տնտեսության մեջ
աշխատած լինեն առնվազն 2 շաբաթ:

Առողջապահության ժողովրդական կո-
միտարիատի բոլոր բուժական մարմիննե-
րն ու հիմնարկությունները պարտավոր
են բատրակներին ու բատրակուհիներին
ձրի բժշկական սօցնություն ցույց տալու
հիվանդության կամ ծննդաբերության
դեպքում:

Հ. Ո՞վ է նպաստ տալիս ապահովագրված
բատրակներին հիվանդության դեպքում.

- Պ. Նպաստը վճարում է ապահովագրական գանձարկը, յեթե վարձողը բառրակի կամ բառրակուհու համար ապահովագրական տուրք է մուծում ապահովագրական գանձարկը: Բառրակի աշխատավարձը նրա հիվանդության դեպքում վճարում է ապահովագրական գանձարկը:
- Հ. Վորքա՞ն ժամանակ է բառրակին նպաստ տրվում.
- Պ. Հիվանդության դեպքում ապահովագրված բառրակին նպաստ է տրվում մինչև նրա լիովին առողջանալը:
- Հ. Վո՞ր դեպքերում է ապահովագրական գանձարկը նպաստ տալիս բառրակի բնտանիքին:
- Պ. Այն դեպքերում, յերբ ապահովագրված բառրակը մեռնում է վարձողի մոտ աշխատելիս վնասվածք ստանալուց, ապահովագրական գանձարկը նպաստ տալիս է նրա ընտանիքի անդամներին:
- Հ. Ո՞վ է հաստատում բառրակի վնասվելու (խեղանդամության) փաստը.
- Պ. Խեղանդամության փաստը հաստատում է գյուղխորհուրդը, վերը գծախառն դեպքի մասին արձանագրություն է կազմում ընթերակաների մասնակցությամբ: Արձանագրությունն ուղարկվում է մերձակա

- ապահովագրական գանձարկը կամ լիադորին՝ կենսաթոշակ նշանակելու համար:
- Հ. Վարձողը պարտավո՞ր է բառրակի կրած վնասը հատուցելու այն դեպքում, յերբ նա աշխատանքի ընթացքում վնասվում է (յեթե բառրակը ապահովագրված չէ ապահովագրական գանձարկով):
- Պ. Յեթե բառրակը ապահովագրված չէ, ապա վարձողը պարտավո՞ր է նրա խեղանդամության կամ մահվան դեպքում վարձատրություն տալու նրան կամ նրա ընտանիքին: Վարձատրություն չափը վորոշում է ժողովրդական դատարանը, նայած խեղանդամության ստորիմանին:
- Հ. Պարտադիր է, արդյո՞ք, վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրությունը այն գյուղացիական տնտեսություններում, վորնց վրա տարածվում է ժամանակավոր կանոնների ներգործությունը:
- Պ. Պարտադիր չէ, սակայն կարող է կատարվել հոժաբանկամ, վոր ձևակերպվում է վարձողի և սոցիալական ապահովագրություն համապատասխան մարմնի միջև կնքվող համաձայնությունով:
- Հ. Վո՞ր տնտեսություններում է պարտադիր վարձու աշխատանքով զբաղված անձանց սոցիալական ապահովագրությունը.

Պ. Սոցիալական ապահովագրությունը պարտադիր է արդյունաբերական տիպի անտեսություններում: Այս դեպքերում ապահովագրությունը կարգավորվում է հատուկ օրենքների հիման վրա:

XI. Բժշակների յեվ վարձողների միջեվ ծագող վեճերը.

Հ. վարձողի հետ վեճ ունենալու դեպքում բատրակը ո՛րք կարող է դիմել պաշտպանությամբ գտնելու համար.

Պ. Բատրակի և վարձողի միջև վարձու աշխատանքի պայմաններին (համաձայնությամբ նախատեսված) մասին վեճ ծագելու դեպքում բատրակը կարող է դիմել գյուղխորհրդին կից հաշտարար հանձնաժողովին: Այդ վեճերը կարող են ծագել հետևյալ հարցերի շուրջը.—աշխատանքի ժամանակը, վարձատրությունը հաշվելը, աշխատավարձը ժամանակին չտալը, աշխատող վարձի հաշվին տրվող միջերժների վորակը, կերակուրը, տոնները, արձակելն ու հեռանալը, արձակման նպաստը, հիվանդության ժամանակ խնամելը և այլն:

Հ. Վո՞ր դեպքերում է բատրակի և վարձողի փոխադարձ վեճը հանձնվում ժողովրդական դատարանին.

Պ. Յեթե բատրակը և վարձողը համաձայն չեն գործը հաշտատար հանձնաժողովին

հանձնելու, կամ յեթե հաշտարար հանձնաժողովում գործը քննելիս վարձողի ու բատրակի միջև համաձայնություն չի կայանում, գործը հանձնվում է անմիջաբար ժողովրդական դատարանին:

Հ. Ո՞վ է մտնում հաշտարար հանձնաժողովի կազմի մեջ, և ո՞վ է բատրակի շահերի ներկայացուցիչը.

Պ. Հաշտարար հանձնաժողովի կազմի մեջ մտնում է գյուղխորհրդի նախագահը, վորը և հաշտարար հանձնաժողովի նախագահն է համարվում. հանձնաժողովի անդամներն են—բատրակի կողմից Հողանտամիրության ներկայացուցիչը, իսկ վարձողի կողմից՝ նա ինքը անձամբ կամ նրա կողմից լիազորված անձը: Այնտեղ չորտեղ Հողանտամիրություն չկա, բատրակի կողմից մասնակցել կազմի է նրա լիազորը կամ հենց ինքը, բատրակը:

Հ. Ո՞վ է վորոշում կողմերի լիազոր ներկայացուցիչների հարցը:

Պ. Կողմերի (բատրակի և վարձողի) լիազոր ներկայացուցիչների հարցը վորոշում է հաշտարար հանձնաժողովի նախագահը նախքան նիստը բանալը:

Հ. Ինչպե՞ս են լուծվում վեճերը հաշտարար հանձնաժողովներում:

Պ. Յերբ բատրակն ու վարձողը համաձայն-

են վեճը հաշտարար հանձնաժողովի միջոցով լուծելու, գյուղխորհուրդը ամենակարճ ժամանակամիջոցում, համենայն դեպս ղեմում տալուց 3 օրից վոչ ուշ, կազմակերպում և հաշտարար հանձնաժողով: Բոլոր վեճերը այնպեղ լուծվում են միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ, և նախագահը վճռական ձայնի իրավունք չունի, այլ միայն աջակցում և կողմերին, վորպեսզի վեճելի հարցերի վերաբերմամբ համաձայնության գան:

Յեթե կողմերը համաձայնության չեն գալիս, այդ դեպքում շահագրգռված կողմը վեճը կարող է հանձնել համապատասխան ժողովրդական դատարանին:

2. Ի՞նչ ուժ ունի հաշտարար հանձնաժողովի վնիդը՝ յերկու կողմից ստորագրվելուց հետո.
- Պ. Հաշտարար հանձնաժողովում կայացած և նախագահի ու յերկու կողմից ստորագրված համաձայնությունը կողմերի համար պարտադիր է և գատական վճռի ուժ ունի:
2. Ի՞նչ պետք է անել, յերբ վարձողը հրաժարվում է հաշտարար հանձնաժողովի վորոշումը կատարելուց.
- Պ. Յերբ վարձողը հրաժարվում է հաշտարար հանձնաժողովում ստորագրված վորոշումը հոժարակամ կատարելուց, այդ դեպ-

քում գյուղխորհուրդը, գյուղանտառ միության կամ բաղրակի ղեմումի համաձայն, հաշտարար հանձնաժողովում կայացած համաձայնության պաշտոնապես վավերացված պատճենը ուղարկում և ժողովրդական դատարանին՝ կատարողական թերթ ստանալու համար: Կատարողական թերթի հիման վրա հաշտարար հանձնաժողովում կայացած համաձայնությունը ի կատար և անվում հարկադրական կարգով:

2. Ինչպե՞ս են գործերը վարում հաշտարար հանձնաժողովները.
- Պ. Հաշտարար հանձնաժողովի յուրաքանչյուր նիստի համար արձանագրություն է կազմվում: Արձանագրության իսկականը պահվում է գյուղխորհրդի գործերում, իսկ կողմերին—բաղրակին և վարձողին, ինչպես նաև շահագրգռված անձանց՝ նրանց պահանջի հետևանքով տրվում են արձանագրության վավերացված պատճենները:

Բ. «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՎԻՎՆԵՐԻ (ԶՈՐԱՆՆԵՐԻ)ՅԵՎ
ՆՐԱՆՑ ՈԳՆԱԿԱՆՆԵՐԻ ՎԱՐՁՄԱՆ ԿԱՐԳԻ ՅԵՎ
ՆՐԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
ԿԱՆՈՆՆԵՐԸ

(ԱՍՖԽՀ ԱՇԽԺՈՂԿՈՄԱՏԻ 1927 թ. ՄԱՅՍԻ 25-Ի
ՎՈՐՈՇՈՒՄԸ)

Հովիվներ յեվ նրանց ոգնականներ վարձելու
առանձնահատկությունների մասին.

Հ. Ո՞ւմ վրա յե տարածվում հովիվների ու
նրանց ոգնականների վարձման վերաբեր-
յալ վորոշումը.

Պ. Այդ վորոշումը տարածվում է այն հասա-
րակական հովիվների (չորանների) և նը-
րանց ոգնականների վրա, վորոնք վարձով
աշխատում են գյուղական հողային հա-
սարակությունների, նրանց մասերի, ինչ-
պես նաև անասնատերերի առանձին խրմ-
բերի մոտ:

Հովիվների և ոգնականների աշխա-
տանքի այն պայմանները, վորոնք չեն նա-
խատեսված այս վորոշմամբ, կարգավո-
րում են ՍԽՀՄ Ժողկոմխորհի 1925 թ. ա-
պրիլի 18-ի «Գյուղացիական տնտեսու-
թյուններում կիրարկվող սթանդակ վար-
ձու աշխատանքի մասին» Ժամանակավոր
կանոններով և այդ կանոնների կիրարկման
հրահանգով, վոր հրատարակված է ԱՍՖԽՀ
Ժողկոմխորհի կողմից 1925 թ. հուլիսի
30-ին:

Հ. Ո՞ւմ վրա չի տարածվում Աշխոյկումատի
վորոշումը:

Պ. Աշխոյկումատի վորոշումը չի տարած-
վում այն հովիվների ու նրանց ոգնական-
ների վրա, վորոնք վարձու աշխատանք են
կատարում արգյուհաբերական արիւղի տըն-
տեսություններում:

Հ. Ո՞վ է հողային հասարակությունների
կամ անասնատերերի կողմից ստորագրում
աշխատանքի պայմանագիրը:

Պ. Հասարակական լիազորները: Հողային
հասարակությունները, նրանց մասերը և
անասնատերերի խմբերը հովիվներ և նը-
րանց ոգնականները վարձելիս բանակցու-
թյուններ վարելու և աշխատանքի պայմա-
նագիր կնքելու համար ընտրում են հատուկ
լիազորներ, վորոնց տրվում են ընդհանուր
Ժողովի համախոսականը կամ նրանց ընտ-
րության վերաբերյալ արձանագրությու-
նը, վորը վավերացվում է գյուղխորհրդի
կողմից: Հասարակության այդ լիազորնե-
րի պարտականությունն է.— ա) հասարա-
կության անունից բանակցություններ վա-
րել հովիվներ և նրանց ոգնականներ վար-
ձելու համար և նրանց հետ կամ նրանց ա-
նունից գործող արհմիության հետ ստորա-
գրել աշխատանքի պայմանագիրը. բ) կա-
տարել հողային հասարակության, նրա մի
մասի կամ անասնատերերի մի խմբի հանձն

առած պարտութիւնները՝ համա-
ձայն աշխատանքի պայմանագրի (փող հա-
վաքել, հովիւներին ու ողնականների վար-
ձը վճարել և այլն) :

Հ. Կարող եմ, արդյո՞ք, անասնատերերն ան-
միջաբար իրենց պահանջները ուղղել հո-
վիւններին :

Պ. Վո՛չ, անասնատերերը իրենց բոլոր պա-
հանջները կարող են ուղղել հովիւներին
միայն հասարակական լիազօրի միջոցով :

Հ. Կարելի չէ, արդյո՞ք, հովիւի ոգնական
վարձել առանց հովիւի համաձայնութեան :

Պ. Վո՛չ, չի կարելի : Հովիւի ոգնական վարձե-
լու անհրաժեշտութեան դեպքում ոգնակա-
նին վարձում են հասարակական լիազօր-
ները՝ նախապես հովիւի համաձայնու-
թյունն ստանալուց հետո :

Հ. Ի՞նչ կարող եմ անել հովիւի, յերբ ոգնակա-
նը վարձված է առանց նրա համաձայնու-
թեան :

Պ. Հովիւի ոգնականին՝ առանց հովիւի համա-
ձայնութեան վարձելու դեպքում հովիւը
կարող է հրաժարվել ոգնականի գործո-
ւթյունների համար պատասխանատու-
թյուն հանձն առնելուց :

Հ. Ի՞նչ պետք է մատնանշել հովիւի և վարձող-
ների միջև կնքված աշխատանքի պայմա-
նագրի մեջ :

Պ. Աշխատանքի պայմանագրում պետք է
մատնանշվի. — ա) հոտի կազմը (մի տեսակ
տեսուհի, թե խառը), բոլոր անասունների
(կով, ձի և այլն) և մանր անասունների
(փոշխար, հորթ և այլն) քանակութեանը
բ) վարձելու ժամանակամիջոցը և վարձ-
ման սկզբի ու վերջին թվականը. գ) անա-
սուններին դաշտ տանելուց առաջ և վերա-
դարձնելուց հետո հավաքելու կարգը և
կանգնելու տեղը. անասուններին արածաց-
նելու և ջրելու տեղը. դ) աշխատավարձի
տեսակները, չափը և վճարելու ժամա-
նակները. ե) որենքով սահմանված տոն և
հանգստի հատուկ օրերը, աշխատանքից ա-
դատելու և հանգստի օրեր տալու կարգը.
զ) լրացուցիչ պայմանները :

Հ. Վո՞րտեղ է տամբագրվում պայմանա-
գիրը :

Պ. Վարձողների և հովիւների ու նրանց ոգնա-
կանների միջև կնքվող աշխատանքի պայ-
մանագրերը պարտադիր կերպով տոմա-
րագրվում են գյուղխորհրդում. վարձող-
ները և հովիւների անունից պայմանագիր
կնքող արհմիութեաններն իրենք պետք է
պայմանագրերը ներկայացնեն գյուղխոր-
հուրդ՝ տոմարագրելու (մասյան մուծե-
լու) համար :

(Այս մասին մանրամասն տես յերես-
ներ 12-16) :

Հ. Ինչպե՞ս է կարգավորվում հովիվների և նրանց ոգնականների աշխատանքի ժամանակը.

Պ. Հովիվները և նրանց ոգնականների աշխատանքի ժամանակը կարգավորվում է այն իմաստով, վոր վորոշվում է, թե նրանք առանձններին յերբ պետք է դաշտ տանեն և յերեկոյան յերբ պետք է վերադարձնեն:

Հ. Ի՞նչ պարտականութիւններ ունեն վարձողները՝ հովիվներին հանգստի որեր տալու վերաբերմամբ.

Պ. Վարձողները պարտավոր են հովիվներին և նրանց ոգնականներին շաբաթվա մեջ մեկ որ տալ հանգստի համար. այդ որը վորոշվում է կողմերի փոխադարձ համաձայնութեամբ. բացի դրանից՝ նրանք պարտավոր են հովիվներին ու նրանց ոգնականներին աշխատանքից ազատելու հեղափոխական տոներին և հանգստի հատուկ որերին:

(Այս մասին մանրամասնորեն տես յեր. 16-19):

Հ. Ինչպե՞ս է վորոշվում հովիվների ու նրանց ոգնականների աշխատավարձը.

Պ. Հովիվները ու նրանց ոգնականները աշխատավարձը վորոշվում է աշխատանքի պայմանագրով, յուրաքանչյուրի համար տ-

աանձին և չի կարող պետական նվազագույն չափից պակաս լինել: Աշխատավարձը վորոշելիս հաշվի յեն առնվում վարձատրութեան բոլոր տեսակները, այն է՝ փողը, մթերքը, և կերակուրը: Աշխատավարձի տեսակը և վճարելու ձևը (ամսական, որական, գործավարձով, գրամով կամ մըթերքով) և վճարելու ժամանակը վորոշվում են կողմերի համաձայնութեամբ: Թույլ է տրվում նաև ամբողջ աշխատավարձը կամ նրա մի մասը վճարել բնամըթերքով (հացահատիկ, անասուն և այլն): համաձայնութեան մեջ մատնանշվում է, թե ի՞նչ առարկաներ պետք է տրվեն, ի՞նչ քանակութեամբ և ի՞նչ վորակի: Հովիվները ու նրանց ոգնականների հետ վերջնական հաշիվ տեսնելիս նրանց աշխատավարձը պետք է վճարվի վոչ ուշ, քան աշխատավարձի պայմանագրով նախատեսված ժամանակամիջոցում: Աշխատավարձի հովիվին տրվող գրամն ու մթերքները պետք է ժամանակին անպայման նշանակվին աշխատանքի պայմանագրի մեջ:

Հ. Հովիվներն ու ոգնականները իրավունք ունեն բանվորական հագուստ և վոտնաման ստանալու.

Պ. Այո՛, ունեն: Վարձողները (գյուղական հասարակութեւնները, նրանց մասերը և անասնատերերի խումբը) պարտավոր են

ձրիաբար հովիվներին ու նրանց ոգնականներին տալու հազուստ, վտանաման, վտանայ չափն ու վտրակը սահմանափակ է կողմերի փոխադարձ համաձայնությամբ և նշանակվում է աշխատանքի պայմանագրի մեջ:

Հ. Բանվորական հագուստն ու վտանամանը մտնում են աշխատավարձի մեջ:

Պ. Վո՛չ, բանվորական հագուստն ու վտանամանը աշխատավարձի մեջ չեն մտնում, այսինքն՝ աշխատավարձը վճարվում է լիովին, և հազուստի ու վտանամանի արժեքը նրա գլխաց չի հաշվվում: Պայմանագրով վորոշված աշխատանքի ժամանակահատվածը լրանալուց հետո՝ ստացված հագուստն ու վտանամանը չեն վերադարձվում, այլ մնում են հովիվներին ու նրանց ոգնականներին:

Հ. Ինչպե՞ս և ի՞նչ չափով է տրվում կերակուրը:

Պ. Հովիվներին ու նրանց ոգնականներին արբոյ կերակրել չափը և կերակուր տալու կարգը վորոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ և մասնաշաղկուտում և աշխատանքի պայմանագրի մեջ:

Հ. Վարձողները պարտավոր են հովիվներին ու նրանց ոգնականներին բնակարան տալու:

Պ. Յեթե հովիվները ու նրանց ոգնականները չունեն իրենց բնակարանը, այդ դեպքում պարտավոր են նրանց ձրիաբար բնակվելու տեղ տալու:

Հ. Վարձողները կարո՞ղ են ինքնագլուխ վորևե գումար պահել հովիվների ու նրանց ոգնականների աշխատավարձից:

Պ. Վարձողները իրավունք չունեն ինքնագլուխ վորևե գումար պահելու հովիվներին ու նրանց ոգնականների աշխատավարձից:

Հ. Ինչպե՞ս և ի՞նչ չափով հովիվներն ու նրանց ոգնականները պատասխանատու յեն իրենց հասցրած վնասի համար:

Պ. Յերբ հովիվները ու նրանց ոգնականները վորևե վնաս են հասցնում, որինակ, ապովորևե վնաս են հասցնում, որինակ, ապովորևե կերպով արտերը արածացնում են, նրանց հանձնված հոտից անասուն են կորցնում կամ նրանց ստակելու պատճառ են դառնում, այդ դեպքում նրանց պատասխանատվության հարցը վորոշվում է դատարանի միջոցով, վորին վարձողները հայց են ներկայացնում: Պատասխանատվության հարցը կողմերի համաձայնությամբ կարող է լուծվել նաև գյուղխորթյամբ կարող է լուծվել նաև գյուղխորհրդին կից հաշտարար հանձնաժողովի միջոցով:

Հ. Պատահած վնասի համար ամենաշատը վորքան գումար կարելի յե գանձել:

Պ. Վարձողին պատճառած վնասի համար հով-
վից կամ նրա ոգնականից կարելի չէ գտն-
վել վոչ ավելի քան նրանց ստացած աշխա-
տավարձի ¹/₃ մասը, բացի այն դեպքերից,
յերբ հովիվը կամ նրա ոգնականը չարա-
մբլտորեն (գիտավորյալ) վնաս են հասց-
նում վարձողին:

Հ. Վո՞ր դեպքերում հովիվներն ու նրանց ոգ-
նականները պատասխանատու չեն ապրի-
նի արածցաման և անասունների կարստի,
սասկելու կամ վիրավորելու համար:

Պ. Հովիվներն ու նրանց ոգնականները սպո-
րինի արածացման, անասունների կորուս-
տի, սասկելու կամ վիրավորելու համար
պատասխանատու չեն, յեթե այդ տեղի յե
ուշենում անասունների ջղային-դրդոված
վիճակում:

Հ. Անասնատերերը կարո՞ղ են հարու տվող և
կատաղի անասուններից նախքի մեջ խառ-
նել:

Պ. Այո՛, հարուղ են, սակայն պարտավոր են
այդ մասին նախազգուշացնել հովիվին ու
նրա ոգնականին և ձեռք տանել զգուշու-
թյան միջոցներ (հարու սովող անասուն-
ների յեղջուրներից տախտակ կախել, վր-
դից փայտ կախել և այլն):

Հ. Ինչպե՞ս է կարգավորվում անչափահաս
հովիվների և հովվի ոգնականների աշխա-
տանքը:

Պ. Արդելվում և 14 տարեկանից փոքր հովիվ
կամ ոգնական վարձել:

Մանր յեղջուրավոր անասուններ տ-
րածացնելու համար (խոզ, փոչխար և
այլն) թույլ է տրվում վարձել 12 տ. լրա-
ցրած պատանիներին: Արդելվում և գիշերա-
յին արոտավայրերի համար 15 տարեկա-
նից փոքր անձանց վարձելը:

Հ. Ընդհանուր առմամբ ի՞նչ պարտականու-
թյուններ են դրվում հովիվների ու նրանց
ոգնականների վրա:

Պ. Հովիվն ու նրա ոգնականը պարտավոր են
խնամքով վարվելու անասունների հետ.
նախքից անասուն կորչելու, վիրավորվե-
լու կամ հիվանդանալու դեպքում հովիվը
պարտավոր է հայտնելու հասարակական
խազորին կամ անասնատիրոջը հենց նույն
օրը, յերբ այդ պարզվում է:

Անասունների վարակիչ հիվանդու-
թյան նշաններ յերևալուն պես հովիվները
պարտավոր են անմիջապես այդ մասին
հայտնելու զյուզխորհրդին: Հովիվները
պարտավոր են հետևելու անասունների
ծնելուն և այդ մասին անմիջապես իմաց
տալու անասունների տիրոջը: Նախքի մեջ
անասունները ծնելու հետևանքների հա-
մար հովիվները պատասխանատու չեն:

Հ. Վարձողը կարո՞ղ է պայմանագրի ժամա-
նակը լրանալուց առաջ արձակել հովիվին:

Պ. Վարձողը (հասարակությունը, նրա մի մասը կամ անասնատերերի մի խումբ) հարգելի պատճառներով կարող է հովվին կամ ոգնականին արձակել պայմանագրի ժամանակամիջոցը լրանալուց առաջ, սակայն պարտավոր է այդ մասին նրան նախազգուշացնել 2 շաբաթ առաջ:

Հ. Յե՞րբ է հովվին կամ ոգնականին արձակման նպատակ տրվում:

Պ. Հովվին կամ ոգնականին ստանց նախորդ զգուշացնելու արձակելիս վարձողը պարտավոր է վճարել արձակվողին նրա աշխատած ժամանակի վարձատրությունը և արձակման նպատակն աշխատելու, վորը նախատեսված է աշխատանքի պայմանագրով: Համենայն դեպս արձակման նպատակը չի կարող հովվի 2 շաբաթվա աշխատավարձից պակաս լինել (հաշված է՝ դրամական և՛ միջերաշխ մասը):

Հ. Վճար դեպքերում հովվի կամ ոգնականը արձակման նպատակ չեն ստանում:

Պ. Այն դեպքերում, յերբ նրանք իրենց կամքով են հեռանում:

Հ. Վարձողը պարտավոր է ապահովագրելու հովվին և նրա ոգնականին:

Պ. Վարձողը պարտավոր է հովվին և ոգնականին ապահովագրելու սոցիալական ա-

պահովագրության կարգով հատուկ որոշումների հիման վրա, արտոնյալ տարիքների:

Հ. Հովվի կամ ոգնականի հիվանդության դեպքում նրանց տեղը պահվում է, քեվոչ:

Պ. Այո՛, պահվում է տնվադն մեկ ամսվա ընթացքում:

Հ. Վարձողը ի՞նչ ոգնություն պետք է ցույց տա ծանր հիվանդ հովվին կամ ոգնականին:

Պ. Վարձողը պարտավոր է հիվանդին տեղափոխել հիվանդանոց կամ բուժարան:

Հ. Հովվի իրավունք ունի հիվանդության ժամանակ կերակուր և բնակարան ստանալու:

Պ. Այո՛, այն դեպքում միայն, յերբ աշխատանքի պայմանագրի համաձայն վարձողը հովվին կամ ոգնականին կերակուր և բնակարան է տալիս: Կերակուր և բնակարան ստանալու իրավունքը հովվի կամ ոգնականի վայելում են հիվանդության ընթացքում տնվադն մեկ ամիս ժամանակով:

Հ. Վարձողը եւ լուծվում վարձողի և հովվի միջև ծագած վեճերը:

Պ. Վարձողի և հովվի միջև աշխատանքի պայմանագրի հոգի վրա ծագած բոլոր

վեճերը լուծվում են գյուղխորհուրդներին
կից հաշտարար հանձնաժողովների միջո-
ցով. (մանրամասն տես յերես 30-33) :

4. Հովիվների վարձման կարգն ու աշխա-
տանքի պայմանները կառգավորելու վերաբեր-
յալ որենիմներն ու վորուումները խախտելու
համար սահմանվող պատասխանատվությունը.

2. Ինչպիսի պարտականություն են կրում
գյուղացիական տնտեսություններում կի-
րաքիվող վարձու աշխատանքի վերաբեր-
յալ որենիմներն ու վորուումները խախտող
անձինք :

7. Բառարկները, հովիվների ու նրանց ուղ-
նականների վարձու աշխատանքի վերա-
բերյալ վորուումները խախտող անձինք
պատասխանատվություն են յենթարկվում
գատական կարգով :

2. Ո՞վ է հսկում գյուղում կերակրվող վար-
ձու աշխատանքի վերաբերյալ որենիմների
ու վորուումների խախտման վրա.

7. Այդ պարտականությունը դրվում է աշ-
խատանքի տեսչություն, գատախաղու-
թյան և արհմիությունների վրա. նրանք
իրավունք ունեն հարց հարուցելու աշխա-
տանքի պայմանագիրը փոխելու կամ լու-
ծելու մասին, յեթե պայմանագիրը վատ-
թարացնում է բառարկների, բառարկու-
հիների, հովիվների ու նրանց ուղնական-

ները դրուծյունը՝ գյուղացիական տրն-
տեսություններում կիրարկվող վարձու
աշխատանքի վերաբերյալ գործող վորու-
ումների համեմատությամբ :

ՎՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԿԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

Գյուղացիական այն տնտեսությունների առավելագույն չափի մասին, վորոնց վրա չեն տարածվում ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների հորհրդի 1925 թ. ապրիլի 18-ի «Գյուղացիական տնտեսություններում ոժանդակ վարձու աշխատանք կիրարկելու պայմանների մասին» ժամանակավոր կանոնները.

1929 թ. հունվարի 7-ին.

ԱՍՖԽՀ Ժողովո՞խորհի 1928 թ. մարտի 31-ի վորոշման հիման վրա (Որ. Հավ. 1928 թ. № 9, հոդ. 101) Ժողովրդական կոմիսարների հորհուրդը վորոշում է.

1. «Գյուղացիական տնտեսություններում ոժանդակ վարձու աշխատանք կիրարկելու պայմանների մասին» ժամանակավոր կանոնները և այդ առթիվ հրատարակված հրահանգները չեն տարածվում արդյունաբերական տի-

պի հետևյալ գյուղացիական տնտեսությունների վրա, վորոնց թվին են պատկանում.—

1) Վարձու բանվորների աշխատանքից ոգտվող այն գյուղացիական տնտեսությունները, վորոնք ունեն գյուղատնտեսական միասնական հարկի յենթակա յեկամուտ—չնչին 100 ուրբի, սակայն ամբողջ տնտեսության համար 300 ուրբուց վոչ պակաս, յեթե տնտեսության մեջ կա մինչև յերեք շունչ:

Ծանոթություն.— Այս հոդվածում մասնանշված տնտեսությունները, վորոնք մի տարեկան բանվորից ավելի չունեն, յենթարկվում են «Ժամանակավոր կանոնների» ներգործության այն դեպքերում, յերբ ժամանակավորապես դրրկվում են հիմնական աշխատավորից (կարմիր բանակ կանչվելու, պետական կամ ընտրովի պաշտոն ստանձնելու հետևանքով):

2) Այն րոյոր տնտեսությունները, վորտեղ միաժամանակ կիրարկվում է առնվազն յերեք բատրակի կամ բատրակուհու աշխատանք տարեկան յերեք ամսից ավելի կամ ամբողջ գյուղատնտեսական շրջանի ընթացքում վոչ պակաս քան 216 մարդ—որ:

Ծանոթություն.— Գյուղատնտեսական մի ամբողջ շրջան է համարվում տվյալ ռայոնում դաշտային աշխատանքների սկզբից մինչև վերջը տեղ ժամանակամիջոցը (6 ամսից վոչ ավելի):

3) Այն գյուղացիական տնտեսությունները, վորոնց ծխի տնդամները արտոնագրեր են վերցնում՝ 1. արդյունարերական և առեվտրական ձեռնարկությունների, կապալների, մատակարարումների համար՝ տնկախ արտոնագրի կարգից, 2. արդյունարեր գրադմունքների համար (առեարական միջնորդություն, փոխադրություն, վորպես տնայնագործարհեստավոր և այլն) 2-րդ կարգի և ավելի բարձր:

4) Վարձու աշխատանք կիրարկող այգեգործական, ջերմոցային և կաթնատնտեսական հողագործական ու անասնապահական բոլոր տնտեսությունները, վորոնք գտնվում են քաղաքային գծի սահմաններում և վճարում են ռենտա կամ վարձագին:

5) Այն գյուղացիական տնտեսությունները, վորոնք ունեն բարդ գյուղատնտեսական մեքենաներ (տրակտոր, կալտոյ մեքենա), վորոնք թե ոգտագործվում են իրենց տնտեսություններում և թե վարձով են տրվում:

6) Այն տնտեսությունները, վորոնք սիտամատիկ կերպով վարձով (գրամով կամ բնամթերքով) գյուղատնտեսական մեքենաներ, բանող անասուններ կամ փոխառվություններ են տալիս բնակչությանը ոգտագործելու համար:

7) Վարձակալ-ձեռնարկատերերի գյուղացիական տնտեսությունները, ինչպես նաև

զգալի չափերով հող վարձակալող գյուղացիական տնտեսությունները, վորոնց վարձակալության չափը սահմանվում է ըստ շրջանների:

8) Վարձու աշխատանք կիրարկող այն գյուղացիական տնտեսությունները, վորոնց տնդամները գրկված են բնարական իրավունքից:

9) Կրոնական պաշտամունքի սպասավորների (քահանաներ, մոլլաներ և այլն) գյուղացիական տնտեսությունները, վորոնք վարձու աշխատանք են կիրարկում:

10) Գյուղատնտեսական, տնայնագործական այն ձեռնարկությունները, վորոնք ոգտվում են վարձու աշխատանքից:

11) Վարձու աշխատանք կիրարկող կոոպերատիվ միությունները, գյուղական համայնքներն ու արտեղները:

2. Վերահիշյալ բոլոր տնտեսությունների նկատմամբ կիրարկվում են խորհրդային տնտեսություններում վարձու աշխատանքից ոգտվելու վերաբերյալ որենքները:

3. Պարտավորեցնել գավառակային գործկումներին և գյուղխորհուրդներին կազմելու այն գյուղացիական տնտեսություններից ուցակները, վորոնց վրա այս վորոշման համաձայն չեն տարածվում «Գյուղացիական



տնտեսություններում ոժանդակ վարձու աշ-
խատանք կիրարկելու վերաբերյալ ժամանա-
կավոր կանոնները»:

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Նախագահի Տեղակալ՝ Ա. ՄՌԱՎՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Գործերի Կառավարիչ՝ Վ. ԿՈՍՏԱՆՅԱՆ

Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի
Քարտուղար՝ Ա. ԹՈՔՄԱՋՅԱՆ

Յերեվան.

Հրապարակված է «Խորհրդ. Հայաստ.»
1929 թ. հունվարի 7-ին, № 5.

2013

«Ազգային գրադարան»



NL0042128

